

ՈՐՈՇՈՒՄ

23-ը սեպտեմբերի 2017, № 16/1

ԹԱՐԳՄԱՆԻՉ, ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ԱՄՆ ՖՐԻՄՈՆՏ ՔԱՂԱՔԻ «ԱՐՁԱԳԱՆՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՐՈ ՄԱԴՈՅԱՆ-ԱԼԱԶԱՋՅԱՆԻՆ ԳՊՄԻ-Ի «ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ» ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՇՊՀ» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 7-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2.2.7 կետով՝

ՇՊՀ գիտական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս ԱՄՆ Ֆրիմոնտ քաղաքի «Արձագանք» բարեգործական հիմնադրամի նախագահ Մարո Մադոյան-Ալաջաջյանին պարգևատրել «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» (հ. 034):
2. «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի թիվ Դ2-7 լսարանը անվանակոչել թատերագետ Ռազմիկ Մադոյանի անունով:
3. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ